



ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 նոյեմբերի 2003թ.

N 339

ք.Ստեփանակերտ

Բոնուսի մեծության հաշվարկման մեխանիզմը և կարգը սահմանելու մասին

«Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանաժողովների արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ԼՂՀ օրենքի 49-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել բոնուսի մեծության հաշվարկման հետևյալ մեխանիզմը և կարգը՝ հանքային իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով սահմանված օգտակար հանածոյի կորզվող արժեքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված պաշարների արտադրյալի 0.01 տոկոսը: Ընդ որում, վճարվող բոնուսի մեծությունը չպետք է պակաս լինի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացված՝ տվյալ ընդերքի տեղամասի ուսումնասիրության համար կատարված ծախսերի չափից:

2. Բոնուսը վճարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե՝ «Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ԼՂՀ օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված կոնցեսիոն պայմանագրով սահմանված ժամկետում, իսկ կոնցեսիոն պայմանագիր չկնքելու դեպքում՝ համապատասխան լիցենզիան ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

3. Բոնուսի գանձումն ապահովվում է հանքավայրի մասին առևտրային արժեք ներկայացնող տեղեկատվությունը տրամադրող պետական կառավարման մարմնի կողմից:

4. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2003 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

ԼՂՀ վարչապետ

Ա.Դանիելյան